ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 24-ը հունվարի 2018թ.

Ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի խորհրդական Կ. Հակոբյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Լամպերի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում	Հասցե
1	«ԳԱԼՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Երևան, Վ. Համբարձումյան 12 շ, 21 բն.
2	«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	ք. Երևան Աճառյան 33/4
3	«Էլջեն» ՍՊԸ	ք. Երևան, Խորենացի 28
4	«Էներջի Սեյվինգ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02235892, Հայտում հասցեն նշված չէ
5	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ	ք. Երևան, Վ. Վաղարշյան 22-24
6	«Մեծ Ծիածան» ՍՊԸ	ք. Երևան, Ա. Ավետիսյան 78, բն. 3
7	«Օպտիմում Էներջի» ՍՊԸ	ք. Երևան, Աջափնյակ, 16 թաղ., 15 շ, 92 բն.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով բաց մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ռ. Մարդոյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում **30.01.2018թ., ժամը 10:30-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- **«Էներջի Սեյվինգ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը,
- **«ԳԱԼՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով չի ներկայացվել մրցույթի հրավերի 7.1 կետով նախատեսված հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով,
- **«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ**-ի կողմից 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով չի ներկայացվել մրցույթի հրավերի 7.1 կետով նախատեսված հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով,
- **«ՄԱԺԷՎ» ՍՊԸ**-ի կողմից 1-ին չափաբաժնի մասով չի ներկայացվել մրցույթի հրավերի 7.1 կետով նախատեսված հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով,
- **«Մեծ Ծիածան» ՍՊԸ**-ի կողմից 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով չի ներկայացվել մրցույթի հրավերի 7.1 կետով նախատեսված հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ հանձնաժողովը որոշեց մերժել **«ԳԱԼՏ ԳՐՈՒՊ», «ԷԼՄԱՐԿԵՏ», «ՄԱԺԷՎ»** և **«Մեծ Ծիածան» ՍՊԸ**-ների հայտերը վերը նշված չափաբաժինների մասով, իսկ **«Էներջի Սեյվինգ» ՍՊԸ**-ի հայտն ամբողջությամբ:

2.3 Մնացած դեպքերում մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- **«Մեծ Ծիածան» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված մրցույթի հրավերի 2.1 հավելվածով նախատեսված մասնակցի իրական շահառուների մասին տվյալների լրացման կարգը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին (իրական շահառուների անձը հաստատող փաստաթղթերի տեսակները լրացված են սխալ դաշտում),
- **«Էլջեն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված մրցույթի հրավերի 2.1 հավելվածով նախատեսված մասնակցի իրական շահառուների մասին տվյալների լրացման կարգը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին (իրական շահառուների հայրանունները նշված չեն),
- **«Օպտիմում Էներջի» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված մրցույթի հրավերի 2.1 հավելվածով նախատեսված մասնակցի իրական շահառուների մասին տվյալների լրացման կարգը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին (1-ին տողում նշած իրական շահառուի հայրանունը նշված չէ):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից ներկայացված շտկումների քննարկման վերջնաժամկետի հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Կ. Հակոբյան
Գնահատող	Մ. Խալաթյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան

30.01.2018թ.